ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, "Լոռու մարզ" նոտարական տարածք:
Երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի տասնչորսին:

Մենք՝ քաղ. ՄՆԱՑԱԿԱՆ ԺՈՐԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆՆ, ծնված՝ 03/05/1955թ.-ին, ՀՇՀ՝ 1305550099, անձնագիր՝ AM0423287, տրված՝ 18/08/2011թ.-ին, 052-ի կողմից, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՍՊԻՏԱԿ, ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆ Փ., 182 Տ հասցեում, հետագայում "ՎԱՐՁԱՏՈՒ", մի կողմից և
Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՄԻԱՄՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը (իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 13, ՀՎՀՀ՝ 02505511, Գրանցման համար՝ 286.184.1024769) ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Հարություն Գևորգյանի, ում անունից 02/04/2021թ. տրված թիվ 02/12-1/9537-21 լիազորագրի հանդես է գալիս ՍԱՄՎԵԼ ԴԱՎԹԻ ԽՈՅԵՑՅԱՆԸ (ծնված 13.09.1980թ., ՀՀ քաղ. անձնագիր՝ AN0241009, տրված 052-ի կողմից 09.08.2012թ., հաշվառված՝ ք. Սպիտակ, Տաշիր թղմ., տ. 1/1 հասցեում), հետագայում "ՎԱՐՁԱԿԱԼ" մյուս կողմից,

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Թորոսյան փողոց 13 գրասենյակ հասցեում գտնվող անշարժ գույքից՝ 156.2քմ մակերեսով տարածք՝ (որի հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և համարվում է սույն պայմանագրի բաղկացուցիչ մասը), Վարձակալի կանոնադրական խնդիրներից բխող աշխատանքային գործունեության իրականացման համար:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին (սեփականության վկայական N 24032021-06-0033 տրված՝ "24" մարտի 2021թ.՝ Անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի Լոռու տարածքային ստորաբաժանման կողմից):

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ բաժնում առկա է հետևյալ գրառումը

Շինությունների բնութագիրը և լրացուցիչ նշումներ բաժնում կատարվել են ուղղումներ: Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման իրական ամսաթիվն է՝ 15/03/2021թ.: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է 04/10/2005թ N199-Ն ՀՀ օրենքի 23-րդ /ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ /հողվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման արժեքի անդորրագիրը ներկայացվելու դեպքում:

1.3 Վարձատուն երաշխավորում է, որ Գույքը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է նաև Անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի Լոռու տարածքային ստորաբաժանման կողմից "26" մարտի 2021թ տրված N ՍՏ-26032021-06-0391 միասնական տեղեկանքով:

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ բաժնում առկա է հետևյալ գրառումը

Առկա է ՕՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆ:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը Վարձատուն պարտավոր է հանձնել հանձնման-ընդունման ակտով: Հանձնման-ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

2.2 Սույն պայմանագիրը գործում է մինչև 25.12.2022 (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար քսաներկու թվականը):

2.3 Սույն պայմանագրով "Վարձատուն" և "Վարձակալը" սահմանում են, որ իրենց կնքած պայմանագրի պայմանները կիրառվում են երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի մեկից իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է 270000 (երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումար, ներառյալ բոլոր ծախսերը և եկամտային հարկը:

3.2 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը՝ առանց եկամտային հարկի, Վարձակալը Վարձատուին է վճարում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 20-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Վարձակալը վարձավճարից հաշվարկվող եկամտային հարկը, որպես հարկային գործակալ, պահում և բյուջե է փոխանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

3.3 Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի 1510019763160200 բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է երկկողմ հաստատված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Վարձատուն պարտավոր է՝

4.1.1 Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,

4.1.2 Վարձակալած տարածքում ապահովել կոմունալ համակարգերի անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4.1.3 Ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին:

4.2 Վարձատուն իրավունք ունի՝

4.2.1 Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել վարձավճարը:

4.2.2 Վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ մեկ ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձակալին:

4.3 Վարձակալը պարտավոր է՝

4.3.1 Ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար պայմանագրով նախատեսված վարձավճարը:

4.3.2 Ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

4.4 Վարձակալը իրավունք ունի՝

4.4.1 Եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտ կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից, իսկ եթե Օբյեկտի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը,

4.4.2 Օբյեկտը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում.

4.4.3 Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը:

4.4.4. Վարձակալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ մեկ ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի (զրո ամբողջ հինգ տասնորդական տոկոսի) չափով:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձման ժամկետը խախտելու դեպքում Վարձակալը իրավունք ունի Վարձատուին ներկայացված գրավոր ծանուցմամբ պահանջելու վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ պայմանագրի գնի 0.05 %-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոսի) չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

5.4 Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձատուն իրավունք ունի Վարձակալին ներկայացված գրավոր ծանուցմամբ պահանջելու վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոսի) չափով:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Կողմերը չեն կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով մյուս Կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> պայմանագրով վարձակության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝ ցանկացած ժամանակ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն պայմանագրի շրջանակներում ցանկացած ծանուցումները և փաստաթղթերի հանձնումը կարող է կատարվել Կողմերի ընտրությամբ առձեռն հանձնելու կամ փոստային ծառայության միջոցով սույն պայմանագրով սահմանված հասցեին պատվիրված նամակ ուղարկելու միջոցով: Ընդ որում, եթե, փաստաթղթի հանձնումը կատարվել է փոստային ծառայության

միջոցով՝ սույն պայմանագրով Կողմին հայտնի վերջին հասցեին, այն համարվում է ստացված, իսկ ծանուցման պարտավորությունը՝ պատշաճ կատարված, դրա ուղարկման օրվանից 7-րդ աշխատանքային օրը՝ անկախ դրա փաստացի ստացման հանգամանքից:

8.2 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ երեսուն աշխատանքային օրվա ժամկետում պետական գրանցման:

8.3 Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, վավերացված են նոտարի կողմից և գրանցված են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

8.4 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն, չորս օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է համապատասխան նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում:

8.5 Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:

8.6 Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի, ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.7 Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

9. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Վարձակալ

Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
"Միասնական սոցիալական ծառայություն" Պետական մարմին
ք.Երևան Նալբանդյան 13
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

(ստորագրություն

Լիազորված անձ ՍԱՄՎԵԼ ԴԱՎԹԻ ԽՈՅԵՑՅԱՆ

Վարձատու

ՄՆԱՑԱԿԱՆ ԺՈՐԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նոտարական ակտի կոդ: 504-20210414-37-5044247
Նոտարական ակտի գաղտնագիր: 1EZZAX

Վավերացման մակագրություն կնքված պայմանագրի վրա

Երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի տասնչորսին: Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության "Լոռու մարզ" նոտարական տարածքի նոտար Վաչիկ Ալեքսանի Ալեքսանի Մաթոսյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունները, գործունակությունները և իրավունակությունները ստուգված են:
Գրանցված է սեղանամատյանում N 989

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասներկու հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյան

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Մ 1:200

(մասշտաբը)



Կատարող _____

(ստորագրությունը)

Նոտարական ակտի կոդ: 504-20210414-88-5044249
Նոտարական ակտի գաղտնագիր: ZEEUH3

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն ՞Լոռու մարզ՞ նոտարական տարածք:
Երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի տասնչորսին:

ԵՍ՝ քաղ. ՄԱՐԻԵՏԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆՆ, ծնված՝ 31/01/1960թ.-ին, ՀԾՀ՝ 8101600051, անձնագիր՝ AM0423298, տրված՝ 18/08/2011թ.-ին, 052-ի կողմից, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՍՊԻՏԱԿ, ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆ Փ., 182 S հասցեում, հայտնում եմ, որ համաձայն եմ իմ ամուսինը՝**ՄՆԱՑԱԿԱՆ ԺՈՐԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ,** ծնված՝ 03/05/1955թ.-ին, ՀԾՀ՝ 1305550099, անձնագիր՝ AM0423287, տրված՝ 18/08/2011թ.-ին, 052-ի կողմից, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՍՊԻՏԱԿ, ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆ Փ., 182 S հասցեում,
Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության "ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ" Պետական մարմնին ցանկացած վարձավճարի չափով, ժամկետով և պայմաններով տա վարձակալության մեր համատեղ սեփականություն համարվող անշարժ գույքից՝ 156.2 քմ մակերեսով տարածք, որը գտնվում է **Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Թորոսյան փողոց 13 գրասենյակ հասցեում, որի հատակագիծը կցվում է սույն պայմանագրին՝ կնքելով վարձակալության պայմանագիր:**

Ստորագրություն_____ **ՄԱՐԻԵՏԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի տասնչորսին:
Սույն համաձայնությունը վավերացվել է իմ՝ Հայաստանի Հանրապետության ՞Լոռու մարզ՞ նոտարական տարածքի նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյանիս կողմից: Համաձայնությունը **ՄԱՐԻԵՏԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ** ստորագրել է իմ ներկայությամբ: Նրա ինքնությունը հաստատված է, գործունակությունը ստուգված է:

Գրանցված է սեղանամատյանում N 928

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 20 ապրիլի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Թորոսյան փողոց 13 գրասենյակ

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր 14/04/2021թ. սեղանամատյան 929

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 20042021-06-0020, գաղտնաբառ՝ H3ZSVAWBQ6V7

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	06-006-0495-0002-001	Գրասենյակ	156.2 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը՝ մինչև «25» դեկտեմբեր 2022 թվականը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արթուր Գևորգյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 20042021-06-0020, գաղտնաբառ՝ H3ZSVAWBQ6V7

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Նոտարական ակտի կոդ: 504-20221220-117-6543494
Նոտարական ակտի գաղտնագիր: PPCRNE

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

14.04.2021 թվականին կնքված սեղանամատյանում թիվ 929 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

Հայաստանի Հանրապետություն, ՞Լոռու մարզ՞ նոտարական տարածք:
Երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի քսանին

քաղ. **ՄՆԱՑԱԿԱՆ ԺՈՐԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**, ծնված՝ 03/05/1955թ.-ին, ՀԾՀ՝ 1305550099, անձնագիր՝ AU0385740, տրված՝ 09/08/2021թ.-ին, 052-ի կողմից, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՍՊԻՏԱԿ, ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆ Փ., 182 Տ հասցեում, այսուհետ **ԿՈՂՄ 1** մի կողմից, և
Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը (ՊՄ), (իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 13, ՀՎՀՀ՝ 02505511, Գրանցման համար՝ 286.184.1024769) ի դեմս գլխավոր քարտուղար Ագնեսա Աղաբաբյանի, ում անունից 13/12/2022թ. տրված թիվ 02/12-1/67885-22 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության Սպիտակի տարածքային կենտրոնի պետ ԱՐՍԵՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԱՎԱԳՅԱՆԸ, ծնված՝ 29/12/1985թ.-ին, ՀԾՀ՝ 3912850097, նույնականացման քարտ՝ 005710579, տրված՝ 09/11/2017թ.-ին, 066-ի կողմից, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ՎԱՆԱՁՈՐ, ԱԲԵՂՅԱՆ Փ., 50, Շ, 1ԲՆ հասցեում, հասցեում, **ԿՈՂՄ 2** մյուս կողմից, իսկ երկուսը միասին ՞Կողմեր՞

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

14.04.2021 (երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի տասնչորսին) թվականին կնքված սեղանամատյանում թիվ 929 (ինը հարյուր քսանինը) համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը

Պայմանագրի 2.2 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

Սույն պայմանագիրը գործում է մինչև 25.12.2023թ. (երկու հազար քսաներեք թվականի դեկտեմբերի քսանհինգը):

Սույն պայմանագիրը հանդիսանում է 14.04.2021 թվականին կնքված սեղանամատյանում թիվ 929 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն Պայմանագրի վավերացման հետ կապված ծախսերը կատարում է Կողմ 2-ը:

Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, երեք օրինակ տրամադրվում է կողմերին, իսկ մեկ օրինակը պահվում է ՀՀ ՞Լոռու մարզ՞ նստավայր ք. Սպիտակ նոտարական գրասենյակում:

Սույն պայմանագիրը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, **նոտարական վավերացման օրվանից սկսած երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:**

Կողմ 1
ՄՆԱՑԱԿԱՆ ԺՈՐԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կողմ 2
ՀՀ Աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարության
«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՄ
լիազորված անձ ԱՐՍԵՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԱՎԱԳՅԱՆ

Վավերացման մակագրություն կնքված Պայմանագրի վրա

Երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի քսանին
Սույն Պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության ″Լոռու մարզ″ նոտարական տարածքի նոտար ՎԱՉԻԿ ՄԱԹՈՍՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը սույն Պայմանագիրը ստորագրել են իմ ներկայությամբ:
Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունը, գործունակությունը և (կամ) իրավունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում N 3265

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյան

Նոտարական ակտի կոդ: 504-20221220-88-6543498
Նոտարական ակտի գաղտնագիր: DG4510

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն ՝՝Լոռու մարզ՝՝ նոտարական տարածք:
Երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի քսանին:

ԵՍ՝ քաղ. ՄԱՐԻԵՏԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆՆ, ծնված՝ 31/01/1960թ.-ին, ՀԾՀ՝ 8101600051, անձնագիր՝ AU0385736, տրված՝ 09/08/2021թ.-ին, 052-ի կողմից, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՍՊԻՏԱԿ, ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆ Փ., 182 Տ հասցեում, հայտնում եմ, որ համաձայն եմ իմ ամուսինը՝**ՄՆԱՑԱԿԱՆ ԺՈՐԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ,** ծնված՝ 03/05/1955թ.-ին, ՀԾՀ՝ 1305550099, անձնագիր՝ AU0385740, տրված՝ 09/08/2021թ.-ին, 052-ի կողմից, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՍՊԻՏԱԿ, ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆ Փ., 182 Տ հասցեում,
Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ''ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ'' Պետական մարմնի հետ կնքի 14.04.2021 (երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի տասնչորսին) թվականին կնքված սեղանամատյանում թիվ 929 (ինը հարյուր քսանինը) համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ փոփոխելով Պայմանագրի 2.2 կետը, խմբագրելով և շարադրելով հետևյալը՝
Սույն պայմանագիրը գործում է մինչև 25.12.2023թ. (երկու հազար քսաներեք թվականի դեկտեմբերի քսանհինգը):
Պայմանագրի մնացած կետերը թողնել անփոփոխ:

Ստորագրություն _____ **ՄԱՐԻԵՏԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի քսանին:
Սույն համաձայնությունը վավերացվել է իմ՝ Հայաստանի Հանրապետության ՝՝Լոռու մարզ՝՝ նոտարական տարածքի նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյանիս կողմից: Համաձայնությունը **ՄԱՐԻԵՏԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ** ստորագրել է իմ ներկայությամբ: Նրա ինքնությունը հաստատված է, գործունակությունը ստուգված է:

Գրանցված է սեղանամատյանում N 3264

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 9 հունվարի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՄ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Թորոսյան փողոց 13 գրասենյակ

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 20042021-06-0020 վկայական, 14.04.2021թ կնքված թիվ 929 համարով ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին պայմանագիր 20.12.2022թ թիվ 3265

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝
Մակերեսի չափը (հա)՝
Նպատակային նշանակությունը՝
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝
Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 09012023-06-0002, գաղտնաբառ՝ FZT2WDTAIVVI

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	06-006-0495-0002-001	Գրասենյակ	156.2 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը՝ մինչև «25» դեկտեմբեր 2023 թվականը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Սուրեն Սարգսյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 09012023-06-0002, գաղտնաբառ՝ FZT2WDTAIVVI

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե